## ԻԴ.

# ՅԱՒԵԼՈՒԱԾ[1]

«Մեկնութիւն մարգարէութեան Յօնանու արարեալ Տեառն Եփրեմի վարդապետի Ասեցւոյ՝ յաշակերտէ և եղբօր որդւոյ Տեառն Գաբրիէլի գերահանճար կաթուղիկոսի՝ ի խնդրոյ Տեառն Թէոդորոսի վարդապետին Ասեցւոյ՝ Ի թուին հայոց 1218»։—

Քառածալ դրիւք՝ նոտր և շատ մաքուր գրուած և հաստարակ թղթի վերայ՝ 111 էջէ բաղկացած է. ունի վեց ընդարձակ էջ յառաջաբանութիւն։

«Յիշատակարան»։

«Արդ ընկալեալ զայս դուզնաքեայ աշխատութիւնս մեր եղբայր Թէոդորոս և այցելու մեծին Անտիոքայ՝ որ ի յեղձ

---

1. Դավրէժ Նարիման Մելիք-Զօհրաբեան ուսումնասէր եւ յարգելի անձի տունը տեսայ բազմաթիւ ձեռագիրներ եւ մի առանձին տետրակ, յորում վերջի մի դարու կարեւոր անցքերն արձանագրուած էր, վերջինը թողի, այլ միայն կարգ մի ձեռագիրներու յիշատակարանները գրի առի, որոց մի մասն կը ներկայացնեմ ընթերցողաց: